Կարծիք

Հարություն Գեորգիի Սելիմյանի «Դավանական նոր իրավիճակը և ըմբռնումները՝ ըստ 19-րդ դարի 40-50-ական թթ.ավետարանական մամուլի (Կ. Պոլիս, Զմյուռնիա), Թ.00.05 «Կրոնի տեսություն և պատմություն»(պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պայմանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Հայտնի իրողություն է, որ 19-րդ դարի 40-50-ական թ.թ. Արևմտյան հայ իրականության մեջ ազգային ոգու արթնացման ժամանակաշրջան էր,որին նպաստեցին Օսմանյան կայսրությունում 1839թ. սկսած թանզիմաթի բարեփոխումները,ոչ մահմեդական քաղաքային բնակչության հասարակական կյանքի աշխուժացման գործում և նպաստեցին արևմտահայության մեջ լուսավորչական շարժման ծավալմանը: Բացի այդ դրան նպաստեց նաև 19-րդ դարի 30-50-ական թ.թ. համաեվրոպական ազգային ազատագրական ,հեղափոխական շարժման վերելքը, որը լայն արձագանք գտավ հայ իրականության մեջ, հատկապես արևմտահայ մամուլում :

1840թ. սկզբնավորված արևմտահայ ազգային պարբերական մամուլը մեծ մասամբ աչքի ընկավ ազգանվեր գործունեությամբ: Այդպիսի գործունեությամբ հատկապես աչքի ընկավ 1840թ. Կ. Պոլսում, Ամերիկայում կրթություն ստացած Խաչատուր Ոսկանյանի հիմնադրած «Ազդարար Բյուզանդյան» և Ղուկաս Պալթազարյանի Զմյուռնիայում հիմնադրած «Արշալույս Արարատյան» աշխարհաբար լեզվով հրատարակված շաբաթաթերթի կողքին լույս տեսած «Շտեմարան պիտանի գիտելեաց» պարբերականը, որպես առաջին կրոնաթերթ , որպիսին մինչ այդ չէր եղել արևմտահայ իրականության մեջ: Նրան 1854թ. փոխարինեց «Ավետաբեր և Շտեմարան պիտանի գիտելեաց» երկշաբաթաթերթը: Հենց այս կրոնաթերթերի և «Բազմավեպ» և «Արձագանք» հանդեսների նյութերի հետազոտությունն էլ կազմել է ատենախոսության թեմայի ընտրության հիմքը, որի վերլուծությամբ էլ ատենախոսը ներիկայացրել է արևմտահայ իրականության մեջ

դավանական կարգավիճակի և ըմբռնումների խորապատկերը և կրոնական իրականությունը :

Ատենախոսը առաջին անգամ փորձ է արել համակողմանի ու համապարփակ քննության ենթարկել հետազոտվող թեման: Թեմայի ուսումնասիրությունը լուսաբանվել է մի շարք դավանական, հոգևոր, մշակութային, կրոնաբարոյական,ազգային, մարդասիրական նոր ընկալումների ու մոտեցումների , ըստ ժամանակի մամուլի նպատակային ուղեգծի , որը հնարավորություն է տվել ուրվագծել այդ ժամանակաշրջանի պոլսահայ հոգևոր կյանքը իր բնորոշ կողմերով ու առանձնահատկություններով՝ համեմատելով արդի պոլսահայ հոգևոր կյանքի որոշ հանգամանքների հետ:

Աշխատանքի ներածականում ատենախոսը քննարկել է ատենախոսության նպատակներն ու 7 կետից բաղկացած խնդիրները:

Ուսումնասիրության նպատակն է պոլսահայ նշված ժամանակաշրջանի կրոնական մամուլի ուսումնասիրությամբ և վերլուծությամբ ներկայացնել Հայ Ավետարանական եկեղեցու բարեկարգման ազդեցությամբ ձևավորված նոր դավանաբանական մոտեցումներն ու ընկալումները՝ պոլսահայ հոգևոր-մշակութային տիրույթի մեջ:

Ատենախոսության խնդիրներն են

Ա) Պոլսահայ ժամանակի կրոնական մամուլի քննությամբ ցույց տալ բարեկարգության ազդեցությունը դավանաբանական համակարգի վրա:

Բ) Ուսումնասիրել այդ շրջանի Հայ Ավետարանական եկեղեցու կազմակերպումը դավանաբանական հիմքի վրա,հայկական կյանքի ազատականացման միտումներն ու խորացումները:

Գ) Լուսաբանել այդ շրջանի կրոնական մամուլի մոտեցումները և դրսևորումները վերոնշյալ խնդիրներ ձևակերպման և լուծման ուղղությամբ:

Դ) Ուրվագծել այդ շրջանում ձևավորված դավանական նոր իրավիճակը:

Ե) Սահմանել դավանական նոր մոտեցումները՝ ընդգծելով նրանց բնորոշ կողմերը:

Զ)Անդրադառնալ այդ շրջանի ավետարանական ազատականության վախճանաբանական,աստվածաբանության,կրոնաբարոյական ուսմունքներին, քննելով դրանք ազգային այլ խնդիրների՝ քրիստոնեության և քաղաքակրթության շրջանակներում:

Է) Լուսաբանել կրոնական կարևորագույն թերթերի որդեգրած ուղեգիծը բարեկարգության հարցերում:

Ատենախոսը փաստերը հետազոտելու և մեկնաբանելու համար, առավելապես կիրառել է պատմաքննական,համադրական զուգադրական,համեմատական փաստերի և իրադարձությունների հետադարձ քննության մեթոդները: Գլխավոր գիտական նորույթն այն է , որ քննության են ենթարկվում Հայ Ավետարանական եկեղեցու դավանական հիմքի վրա կազմված բոլոր նախադրյալները,տիրող պայմանները և այն հանգեցնող պատճառները: Ատենախոսության առանձին դրույթներ ու եզրակացություններ ունեն գործնական ու կիրառական նշանակություն, քանզի դրանք կարող են օգտագործվել բուհական կրթական համակարգի մեջ՝ հայ եկեղեցու ուսումնասիրությանը ուղղված դասընթացների կրթական ծրագրերում ,ինչպես նաև մամուլի , գլխավորապես կրոնական պատմության ուսումնասիրության գործի բնագավառում:

Ատենախոսության լույսի ներքո կարելի է վերանայել և նորովի ուսումնասիրել այդ շրջանի պոլսահայ հոգևոր կյանքի մեջ դավանական որոշ մոտեցումներ և ըմբռնումներ:

169 մեքենագիր էջեր ընդգրկող ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից :

Ներածության մեջ (էջ 2- 25) հիմնավորված է ընտրված թեմայի գիտական նշանակությունն ու արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ներկայացված է

աշխատանքի գիտական նորույթը, տրված է օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության տեսությունը: Ներածության մեջ անդրադարձ է կատարվել պատմական այն նախապայմանների պատճառների և հանգամանքների լուսաբանմանը, որոնց հետևանքով ստեղծվեցին նախադրյալներ, դավանական նոր իրավիճակի ձևավորման գործում՝ պոլսահայ հոգևոր կյանքի մեջ:

Առաջին գլուխը, որը անվանվում է «Եվրոպական բարեկարգումն ու արևմտահայ ավետարանականները 19-րդ դարի 40-ական թ.թ.», ընդգրկում է 26-ից 78-րդ էջերը և բաղկացած է երեք ենթագլխից՝ «Հոգևոր ակունքները», «Հայ ավետարանական շարժումը» և «Արևմտահայոց առաջին կրոնաթերթը»: Այստեղ քննական վերլուծության է ենթարկվում բարեկարգության գաղափարախոսությունը և անդրադարձ է կատարվում բողոքականության դավանաբանության հինգ դրույթներին: Հայտնի է, որ 15-16-րդ դարերը վճռական եղան քրիստոնեական Արևմուտքի համար, քանզի նոր աշխարհի բացահայտումն ու գիտական հեղափոխության սկզբանավորումը բախտորոշ դարձան ամբողջ աշխարհի համար: Վերածննդի դարաշրջանում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական ու մշակութային փոփոխությունների ազդեցությունը կրոնական կյանքի վրա, ատենախոսը այս ոլորտում առավել կարևորում է 16-րդ դարում եվրոպական մի շարք երկրներում (Անգլիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Հոլանդիա) սկսած կրոնական հզոր շարժումը՝ «Ռեֆորմացիան»՝ բարեկարգությունը:

Անդրադառնալով Լութերականության մեջ ձևակերպած բողոքականության հիմնական սկզբունքներին՝«Միայն Հավատով», առանց հոգևորականության և եկեղեցու միջնորդությամբ Աստծուն հաղորդակցվելով փրկվելու գաղափարին, ատենախոսը հիմնավորում է Մարտին Լութերի և Յան Կալվինի կողմից հոգևորի վերաբերյալ տեսական մոտեցումները,բողոքականության դավանաբանության հինգ դրույթները:

Ատենախոսության հեղինակին հաջողվել է հայ ավետարանական շարժումը, ներկայացնել որպես ավետարանականների գործունեության շրդարձային

փուլ,բողոքականության փուլ, քարոզչության պատմության, Կոստանդնուպոլիսի և Օսմանյան կայսրության մեջ միսիոներական նոր «հարթության», ինչպես նաև կրոնական առաջատար թերթերի գաղափարական ուղեգծերը և Հայ Ավետարանական եկեղեցու դավանական կազմակերպման բնորոշ կողմերը: Ըստ ատենախոսի Հայ Ավետարանական շարժման արդյունքում ձևավորվում են Հայ Ավետարանական եկեղեցու դավանական նոր հիմքերը: Իբրև դրա լավագույն վկայություն նա բերում է Օսմանյան կայսրության ժամանած առաջին միսիոներների տպավորությունները այն մասին, որ կայսրության բոլոր ժողովուրդներից հայերը ամենից բացն էին բողոքական միսիոներների գործունեության հանդեպ, նպաստելով աշխարհի բարոյական վերակառուցմանը, դպրոցի և եկեղեցու հիմնադրմանը,յուրաքանչյուր ընտանիքի համար Աստվածաշունչ ընթերցելու և աղոթելու հնարավորության ստեղծմանը և այլն:

Անդրադառնալով 1830-40-ական թ.թ. հայկական իրականության մեջ ազգային ոգու վերածննդին,ատենախոսը առանձնացնում է նրանում մամուլի խաղացած դերը, ,հրատարակվող թերթերի ու ամսագրերի կողքին «Լրո գիր» (1832, Կոստանդնուպոլիս) «Շտեմարան պիտանի գիտելեաց» (1839, Զմյուռնիա) «Բազմավեպ» (1843, Վենետիկ) «Ազգասեր» (1845, Կալկաթա) «Կովկաս» 1846, Թիֆլիս) «Եվրոպա» (1847 Վիեննա) և այլն. հրատարակվող առաջին կրոնաթերթին, գլխավորապես ամերիկյան բողոքականների պարբերականներին՝ ներկայացնելով նրանց դավանական ուղղվածությունները:

Վերլուծելով ամերիկյան բողոքականների հրատարակությունները՝ «Շտեմարան պիտանի գիտելեաց» (Զմյուռնիա, 1839-1854), «Ավետարեր» (Կ. Պոլիս, 1855-1915), «Ավետարեր մանկանց»(Կ. Պոլիս, 1908-1915) և այլ պարբերականների դավանական գործունեությունը, ատենախոսը շեշտադրում է նրանց դրական վաստակը հատկապես հայոց լեզվի մաքրության պահպանման գործում, «հետզհետե մաքրելով ու պատրաստելով աշխարհին նոր գրականության լեզուն»(էջ 79):

Երկրորդ գլուխը (էջ 79-ից 111) «Սիրո,հույսի, և մեղքի ըմբռնումները հայ ավետարանական եկեղեցու մեջ». բաղկացած է երկու ենթագլուխներից: Այստեղ ատենախոսը քննել է սիրո և հույսի թեմանները պարբերաթերթի ընկալմամբ:

Պարբերականը սահմանում է Աստծո սիրո և մարդու հանդեպ հույսի ընկալումները: Աստծո նկատմամբ սերը միակ ճշմարիտ բարիքի երկրպագությունն է, երախտագիտությունը՝ ընծաներ անողին: Իսկ մարդու նկատմամբ սերը լցված է ավելի շատ խղճահարությամբ, քան երկրպագությամբ: Ատենախոսը այստեղ դուալիզմ է նկատում՝ երկու մեծ արժեքների՝ Աստծու և մարդու նկատմամբ՝ ընդգծելով Մարդ Որդու և Աստծու Որդու երկակիությունը՝ դուալիզմը: Ատենախոսը քննական վերլուծության է ենթարկում պարբերաթերթի մեջ մեղքի, մեղսագործության ավետարանչական ընկալումները:

Վերջին երրորդ գլուխը՝ (էջ 112-153) «հոգևոր-մշակութային և ազգային կյանքի հիմնախնդիրները», բաղկացած է երեք ենթագլուխներից: Այստեղ բովանդակային վերլուծության է ենթարկվում մարդու ազատականության տեսությունը՝ ըստ ավետարանչական դավանաբանության : Սուրբ Կաթողիկե եկեղեցին հետազոտվում է՝ որպես նոր մարդկային համայնք: Հատուկ քննարկման նյութ է ատենախոսությունում քաղաքակրթության և քրիստոնեության հարաբերակցության հարցը՝ «մարտնչող եկեղեցու» ռազմավարության դիտարկմամբ: Ատենախոսը «Հոգևոր մշակույթի ըմբռնման» հարցում կատարելով բովանդակային ուսումնասիրություն,քննարկում է պարբերականների տեսական մոտեցումները՝ հոգևոր մշակույթի սահմանման վերաբերյալ, այն համարելով որպես հոգևոր կատարելագործության ամբողջություն: Ատենախոսության մեջ համակողմանի քննության է ենթարկվում քրիստնեական ընկալումները՝ ազգի,կրոնի, դաստիարակության և կրթական համակարգի վերաբերյալ ,միաժամանակ լուսաբանելով սկզբունքային կողմերը,կրոնական պարբերականների անդրադարձը այս ուղղությամբ: Այս գլխում ատենախոսը հանգում է այն եզրակացության, որ ամերիկյան միսիոներների քարոզչությունը Օսմանյան կայսրություն բերեց

ամերիկյան քաղաքակրթության հոգևոր և բարոյական որոշակի արժեքներ,որոնք հնարավորություն տվեցին հայ ժողովրդին իր բողոքի ձայնը հասցնելու եվրոպական դիվանագիտության լայն շրջանակներին(տես՝ էջ 153):

Վերջում՝ «եզրակացություններ բաժնում» ատենախոսը 6 մեքենագիր էջերի շրջանակում կատարել է ընդհանրացումներ և ներկայացրել 13 կետից բաղկացած եզրակացություններ (էջ 154-160): Ատենախոսը վերլուծելով վերոնշյալ հիմնախնդիրները հանգում է այն եզրակացության,որ

Ա)1840-50-ական թ.թ. հայ ազգի ոգու վերածնության տարիներին Հայ Ավետարանական եկեղեցին վերջապես կազմակերպվում է դավանական հիմունքների վրա,որը խորացնում է հայկական կյանքի ազատականացման միտումները:

Բ) Արևմտահայ մամուլի աննախադեպ զարգացումը 1840-ական թ.թ.«Շտեմարան պիտանի գիտելեաց» հանդեսն ու նրան փոխարինած «Ավետաբերը » մինչև վերջ աչքի ընկան ազգանվեր գործունեությամբ, լուսաբանելով ինչպես կրոնա-դավանաբանական հարցեր, պատմաբանասիրական, կրթության և լուսավորության խնդիրները,այնպես էլ այնպիսի գործանական նշանակության հարցեր,ինչպիսիք հայոց լեզվի հարցն էր, օգտագործելով գրական հայերենի ժամանակային գրանցումները՝ սկսած գրաբարից մինչև արևմտահայ աշխարհաբարը ,նրանում ներառելով նաև ռամկական-բանահյուսական տարրերը:

Գ) Օսմանյան կայսրության նկատմաբ ԱՄՆ-ի քաղաքականությունը դրսևորվեց ամերիկայն միսիոներական կազմակերպությունների գործունեությամբ, որը որոշակի դերակատարություն ունեցավ Արևմտահայության ճակատագրում, «բարեկարգությունների» ձևով նպաստեց առողջապահության ու բժշկության նոր համակարգերի կիրառելուն և մշակութային փոփոխությունների ներմուծմանը հասարակության մեջ:

Դ) Ավետարանական ազատականությունը բոլոր զգացումներից վեր է դասում սերը, որը Աստծու նկատմաբ անշահախնդիր տիեզերական էրոս է, իսկ մարդու նկատմամբ՝ մաքուր ազապե:

Ե)Սիրո պատվիրանը հակադրվում է մեղսավորության փաստին,որը աշխարհի արարումից հետո առանցքային իրադարձություն է :

Զ)Քրիստոնեության և քաղաքակրթության հարաբերակցության հարցը ամենևին նոր չէ և քրիստոնեության հակասությունները՝ այս ոլորտում մշտական են և երևան են եկել նրա գոյության ողջ ընթացքում:

Է) Արևմտյան մշակույթը դիտարկվում է իբրև քրիստոնեության ծնունդ,որքան էլ այդ տեսակետը հակամետ է առանձին տեսաբանների սկզբունքներին:

Ը) «Շտեմարան պիտանի գիտելեաց» պարբերականը լինելով հոգևոր-կրոնական եզակի կազմակերպություն հանգամանքների բերումով ծառայություններ է մատուցել նաև «աշխարհիկ մշակույթին» ուղեցույց լինելով կյանքի ամենաբազմազան ոլորտներում:

Թ)Երկու պարբերականներն էլ իրենց աշխարհիկ և հոգևոր գրվածքներով ազգին օգտակար իմացություններ տվեցին:

Ժ)Պարբերականների դիրքորոշման ընդհանուր ուղղությունը պահպանողական էր ,ոչ միայն այն պատճառով ,որ հրատարակիչները հոգևորականներ էին, այլև այդպիսին էր Պոլսում տիրող հասարակական ու քաղաքական մթնոլորտը:

Ի)Ազգի ավանդույթներից լեզուն ու կրոնը պահպանելուց բացի պարբերականները՝ մեծ տեղ հատկացրին նաև մարդասիրության, ազգասիրության և դաստիարակության խնդիրներին:

Լ) Դաստիարակությունը ոչ միայն ազգային խնդիր է, այլև տնտեսական ու քաղաքական, իսկ կրթության հետ միասին նաև ընկերային խնդիր է: Ահա թե ինչու պարբերականները կրթության ու դաստիարակության մեջ են տեսնում ազգի փրկության ճանապարհը:

Խ)Ազգային կրթությունը ըստ պարբերականների պետք է վերածել համազգային,զանգվածային կրթության, որը հնարավորություն կտա ազգին հասնելու ընդհանուր բարեկեցության:

Վերջում 9 մեքենագիր էջերով ներկայացված է օգտագործված հայ և օտարալեզու գրականությունն ու պարբերական մամուլը: Այսպիսով վերլուծելով ատենախոսի կատարած աշխատանքը, կարելի է եզրակացնել,որ կատարվել է մեծածավալ աշխատանք,որն ունի հարուստ բովանդակություն,շարադրված է գրագետ լեզվով,պարունակում է գիտական նորույթ: Սակայն կատարված այս դրվատելի, դրական աշխատանքում, տեղ է գտել մի քանի բացթողումներ և թերություններ որոնց կուզենայինք անդրադառնալ:

1. Ցանկալի կլիներ, որ հեղինակը բավական հանգամանորեն ներկայացներ նաև հայ ավետարանականների ներդրումը և վաստակը նոր հայերենի ձևավորման գործում, քանի որ նրանք իրենց ամսագրերում հատուկ ուշադրություն են դարձրել հայերենը թուրքական լեզվամտածողությունից ազատելու և այն հղկելու գործում:

2.Ատենախոսությունը կշահեր եթե աշխատանքի մեջ տեղ գտնեին նաև հետևյալ աշխատությունները.

2.1 Ղուկասյան Հ., Բողոքականությունը Կովկասում Հայոց մեջ, Թիֆլիս, Ա.հ., 1886:

2.2 Խառատյան Ա., Զմյուռնիայի հայ գաղթօջախը, Եր., Էդիթ պրինտ, 2008:

2.3 Տերոյան Վ., Իմպերիալիստական ծիծեռնակներ, Միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008:

2.4 Քասունի Ե., Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցին, Բեյրութ, 1986:

2.5 Փայասլյան Ստ., Ամերիկյան բողոքական միսիոներների գործունեությունն Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի սկզբից մինչև 1880-ական թվականների կեսերը, /թեկն. Ատենախոսություն/, Եր., 2007:

3. Հեղինակը Հայ ավետարանական եկեղեցու կրոնագիտական բոլոր հիմնավորումները փորձում է կառուցել միայն «Շտեմարան պիտանի գիտելաց»-ի վրա, սակայն հայտնի է, որ բողոքականներն այդ թվականներին հրատարակել են նաև այլ պարբերականներ՝ «Ավետաբեր», «Աւետաբեր մանկանց» և այլն, որոնց վերլուծությունները դուրս են մնացել հեղինակի ուշադրության կենտրոնից:

4. Ատենախոսության առանձին ենթագլուխներում (հատկապես առաջին գլխի 2-րդ և 3-րդ ենթագլուխներում) ավելի շատ գերակշռում է նկարագրական կողմը, որը աշխատության այդ մասին հաղորդում է փաստագրական բնույթ: Չնայած մյուս ենթագլուխներում վերլուծական կողմը գերակշռում է, ցանկալի կլիներ, որ այդ նույնը լիներ նաև նշված ենթագլուխներում:

5. Ատենախոսության լիարժեքությունն ապահովվելու և այն ընդհանրացված դարձնելու համար ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսության գլուխներն ավարտվեին յուրաքանչյուր գլուխն ամփոփոխ եզրակացություններով, որոնք պետք է նշվեին կետերով,ինչպես եզրակացությունում է,որպեսզի ավելի պարզ ու հասկանալի լինի ընթերցողին:

6. Առանձին էջերում (էջ 14,20,26,31,47,51,92,131,134,143,150 և այլն) կան որոշ ոչ ճիշտ ձևակերպումներ, անհարթ մտքեր և ու արտահայտություններ ,որոնք տեխնիկական բնույթի թերություններ են:

Նշված թերություններն ինչ խոսք չեն նսեմացնում Հարություն Սելիմյանի գիտական ուսումնասիրության արժանիքները:

Քննարկմնան ներկայացված ատենախոսությունը հետաքրքիր և բազմակողմանի ուսումնասիրություն է : Այն վկայում է հեղինակի գիտական հասունացման և բավականին բարդ հարցերին ինքնուրույն լուծումներ գտնելու հմտության մասին: Ատենախոսությունը լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող բոլոր պահանջներին,իակ հեղինակը՝ Հարություն Գեորգիի Սելիմյանը լիովին արժանի է իր հայցած պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ պ.գ.դ, պրոֆեսոր Էդիկ Գարեգինի Մինասյան

Պ.գ.դ, պրոֆեսոր Էդ. Գ. Մինասյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ԵՊՀ գիտական քարտուղար՝ պ.գ. թ, դոցենտ Լևոն Սահակի Հովսեփյան

15.02.2021